# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա , 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 40

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 26.12.2002 թվականի ինքնակամ կառուցված շենքերի ինքնակամ զբաղեցված հողամասերի կարգավիճակի մասին 510-Ն ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նոր Երզնկա համայնքի բնակիչ Արտուշ Մարտիրոսյանին սեփականաշնորհվել է 0.13 հա խաղողի այգի և առաջին պետական գրանցման աշխատանքների ժամանակ քարտեզագրման արդյունքում նրան պատկանող խաղողի այգու մակերեսը կազմել է 0,1905 հա (0139-0013 կադաստրային ծածկագրով):
Քարտեզագրման արդյունքում ավել օգտագործվող 0,0605 հա հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար: Այն չի խոչընդոտում հողամասերի նպատակային օգտագործմանը, չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմաշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում և չի առաջացնում սերվիտուտ՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել Արտուշ Մարտիրոսյանի սեփականության իրավունքը Նոր Երզնկա համայնքում բնա կադաստրային քարտեզագրման 0139-0013 ծածկագրով փաստացի օգտագործվող 0,1905 հա խաղողի այգու նկատմամբ:
2. Որոշումը ներկայացնել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ մարզային միավորված ստորաբաժանը պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20__թ.
գ.Նոր Երզնկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա , 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 41

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով՝ *որոշում եմ.*

1.Նոր Երզնկա համայնքի 1-ին փողոցի 34 տան բնակիչ՝ հանգուցյալ Վարդգես Հարությունյանի և 4-րդ փողոցի 14 տան բնակիչ՝ հանգուցյալ Վալոդյա Աղաջանյանի ընտանիքներին տրամադրել ֆինանսական օգնություն 60000 (վաթսուն հազար) դրամի չափով համապատասխանաբար.
1) Վարդգես Հարությունյանի ընտանիքին 30000 (երեսուն հազար) դրամ
2) Վալոդյա Աղաջանյանի ընտանիքին 30000 (երեսուն հազար) դրամ
2. Հանձնարարել գլխավոր մասնագետ Հ. Նազարյանին բյուջեի համապատասխան հոդվածից կատարել վճարում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. ______
գ.Նոր Երզնկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա , 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 42

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Նոր Երզնկա համայնքի բնակիչ՝ Ռոբերտ Հակոբյանի դիմումը դրամական օգնություն ստանալու խնդրանքով և հաշվի առնելով սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը՝
*որոշում եմ.*

1. Քաղ. Ռոբերտ Հակոբյանին տրամադրել դրամական օգնություն 30000 (երեսուն հազար) դրամի չափով:
2. Հանձնարարել գլխավոր մասնագետ Հ. Նազարյանին բյուջեի համապատասխան հոդվածից կատարել վճարում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. ________
գ.Նոր Երզնկա